«Էդիթ Պրինտ» հրատարակչություն

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա՝ Կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիքի ունեցող երեխաների բացահայտման գործընթացի կազմակերպման ձևերը և միջոցները երաժշտական կերպարվեստային և դիդակտիկ խաղերի ժամանակ

Հաստատություն՝ Երևանի թիվ 160 մսուր մանկապարտեզ

Դաստիարակ՝ Անահիտ Կարենի Հայրիյան

Ղեկավար՝ Ժաննա Ավետիսյան

Երևան 2023

Բովանդակություն

Ներածություն ---------- 3
ՏԵՍԱԿԱՆ ՄԱՍ
Գլուխ 1. Ավագ նախադպրոցականների հուզական դրսևորումները կերպարվեստային գործունեության ընթացքում
1.1. Կերպարվեստի տեսակների, ժանրերի, ուսուցումը մանկապարտեզում: Կերպարվեստի պարապմունքի տեսակները ---------- 8
1.2. Նախադպրոցականին կերպարվեստ ուսուցանելու մեթոդները ---------- 11
ԳՈՐԾՆԱԿԱՆ ՄԱՍ
Գլուխ 2. Կերպարվեստի պարապմունքների տեսակները մանկապարտեզի 1-ին և 2-րդ խմբերում
Եզրակացություն ---------- 25
Գրականության ցանկ ---------- 26

Ներածություն

Ծննդից մինչև 6 տարեկան երեխաների զարգացման և կրթական չափորոշիչներն ընդհանուր առմամբ նկարագրում են, թե ինչ պետք է իմանա և ինչ պետք է կարողանա անել երեխան որոշակի տարիքում: Դրանք զարգացման տարբեր ոլորտներում մինչև 6 տարեկան երեխաների վերաբերյալ մեր ունեցած ակնկալիքներն են՝ պայմանավորված տարիքային բնականոն զարգացման օրինաչափություններով և ազգային-մշակութային առանձնահատկություններով: Չափորոշիչները ներկայացնում են ընդհանուր նպատակներ վաղ մանկության տարիների զարգացման և կրթության համար և ուղղորդում են բոլոր մեծահասակներին ճիշտ և արդյունավետորեն շփվելու 0-6 տարեկան երեխաների հետ՝ անկախ այն բանից, թե՝

1) երեխաները հաճախում են մանկապարտեզ, խնամքի կամ զարգացման ու կրթության որևէ հաստատություն, թե՞ հիմնականում մեծանում են տանը,

2) նրանք իրենց տարիքին բնորոշ զարգացող, թե՞ տարբեր կարողություններ և կարիքներ ունեցող երեխաներ են,

3) երեխաները վաղ տարիքից սովորում են խոսել մեկ լեզվով, թե՞ մի քանի լեզուներով և այլն:

Չափորոշիչները գործիք են այն մեծահասակների համար, ովքեր պատասխանատու են այս նպատակները հասկանալու և բոլոր երեխաների առաջընթացն ապահովող հնարավորություններ ստեղծելու և փորձառություններ ապահովելու համար: Չափորոշիչները ստիպում են նաև մտածել, խորապես ըմբռնել և գիտելիքներ ձեռք բերել երեխաների անհատականության, ընտանեկան մշակույթի, որոշակի հարմարեցումների և փոփոխությունների մասին, որոնք կարող են տարբեր լինել երեխաների առանձնահատուկ հանգամանքների դեպքում:

ԳԼՈՒԽ 1 Ծնողից մինչև 6 տարեկան երեխաների զարգացման և կրթական չափորոշիչների համառոտ նկարագիր

Վաղ մանկությունը երեխայի աճի, զարգացման և սովորելու բացառիկ ժամանակաշրջանն է: Կարևոր է նկատի ունենալ, որ որոշ երեխաներ կարող են չափորոշիչներով սահմանված ակնկալիքներից շատ ավելի բարձր ցուցանիշներ ունենալ, մինչդեռ որոշ երեխաներ էլ հնարավոր է, որ ամբողջապես չտիրապետեն այստեղ նշված գիտելիքներին և հմտություններին: Այս իմաստով շատ կարևոր է, որ երեխաների տվյալ տարիքին համապատասխան զարգացման և ուսումնառության հետ կապված ակնկալիքների մասին մտածելիս մենք ուշադրություն դարձնենք նաև նրանց անհատական առանձնահատկություններին: Երեխաները տարբեր են լինում՝ կախված իրենց բնածին հատկություններից, ունեցած փորձից, ունակություններից, առողջական վիճակից և սովորելու նկատմամբ ունեցած վերաբերմունքից, հետևաբար նրանց զարգացումը տարբեր տեմպերով է ընթանում: Պետք է ընդունել, որ երեխաների միջև այսպիսի տարբերությունները բնական են: Ուստի անհրաժեշտ է հարգանք դրսևորել բոլոր երեխաների նկատմամբ և նրանց վերաբերվել որպես ունակ անհատների, որոնք կարող են սովորել, հասկանալ իրենց շրջապատող աշխարհը, ընտրություն կատարել և արտահայտել իրենց սեփական կարծիքը: Մինչև 6 տարեկան երեխաների զարգացման և կրթական չափորոշիչների հիմքում ընկած է այն համոզմունքը, որ երեխաների ուսումնառությունը և զարգացումը բազմակողմանի է, քանի որ ֆիզիկական զարգացմանը զուգընթաց զարգանում են երեխայի խոսքը և լեզուն, զգացմունքները, սոցիալական շփման և իմացական կարողությունները: Հետևաբար երեխայի առողջ և համակողմանի զարգացման համար կարևոր են ուսումնառության բոլոր ոլորտները և դրանք պետք է հավասարապես արժևորվեն: Մեծահասակներն ընդհանուր առմամբ մեծ դեր և ազդեցություն ունեն երեխաների աճի և զարգացման վրա, բայց հատկապես ծնողներն են իրենց երեխաների առաջին և ամենակարևոր ուսուցիչները: Ուսուցիչները և ընտանիքները պետք է աջակցեն, որ երեխաների մեջ զարգանան ամբողջ կյանքի ընթացքում սովորելու ցանկությունն ու հմտությունները: Մեծահասակները պետք է իմանան, որ երեխայի զարգացումը տեղի է ունենում հաջորդական փուլերով և կախված է նրա ունեցած փորձառությունից, ընտանեկան մշակույթից ու անհատականությունից: Մինչև 6 տարեկան երեխաների զարգացման չափորոշիչները մշակվել են՝ առաջնորդվելով երեխայի զարգացման

վերաբերյալ կառուցողական սկզբունքներով: Ըստ այդ սկզբունքների՝ երեխաները լավ են զարգանում այն միջավայրում, որտեղ բավարարվում են նրանց ֆիզիկական, մտավոր և հոգեբանական կարիքները, որտեղ նրանք պաշտպանված են զգում, արժևորվում են որպես անհատներ և ակտիվորեն ներգրավվում են նոր հմտություններ և գիտելիքներ ձեռք բերելու նպատակով կազմակերպված բազմաբնույթ աշխատանքներում: Նրանք իրենց գիտելիքները և արժեքային համակարգը կառուցում են հասակակիցների, ծնողների և այլ մեծահասկաների հետ փոխհարաբերությունների, ինչպես նաև ֆիզիկական ու հասարակական միջավայրի ակտիվ ուսումնասիրությունների միջոցով: Երեխայի առողջ, ներդաշնակ և համակողմանի զարգացման համար անհրաժեշտ է աշխատանք տանել նրա ֆիզիկական, իմացական, հուզական և սոցիալական ոլորտների հավասարաչափ զարգացման ուղղությամբ: Չափորոշիչները դասակարգված են ըստ զարգացման հետևյալ ոլորտների.

1. Շարժողական զարգացում
2. Խոսք և հաղորդակցում
3. Իմացական զարգացում
4. Սոցիալական, հուզական և անձնային զարգացում
5. Ինքնասպասարկում, առողջության պահպանում և անվտանգություն
6. Սովորելու նկատմամբ վերաբերմունք

Չափորոշիչների սույն փաստաթուղթն ունի հետևյալ կառուցվածքը.

• ոլորտները ուսումնառության/զարգացման ուղղություններն են,

• ենթաոլորտները տվյալ ոլորտի բաղկացուցիչ մասերն են,

• չափորոշիչները սահմանում են տվյալ ենթաոլորտում երեխայից ակնկալվող վարքագիծն ընդհանուր առմամբ,

• ցուցիչները նշում են, թե երեխան ինչ գիտի և ինչ է անում, կամ ինչպիսի դիտարկելի վարքագիծ է դրսևորում,

• օրինակները պարզաբանում են յուրաքանչյուր ցուցիչի իմաստը: Վաղ մանկության զարգացման և կրթական չափորոշիչները հասցեագրված են ծնողներին, ուսումնական հաստատություններին, ուսումնական ծրագրերի և տարբեր ձեռնարկների հեղինակներին, ուսումնախաղային նյութեր պատրաստող հաստատություններին: Չափորոշիչներն այն ուղենիշներն են, որոնք մեծահասակները կարող են օգտագործել

տարբեր ոլորտներում երեխաների զարգացմանը նպաստելու համար: Մինչև 6 տարեկան երեխաների զարգացման չափորոշիչները կարող են տարբեր կիրառություններ ունենալ: Մասնավորապես.

• բարելավել ուսուցումը. հիմք հանդիսանալ մինչև 6 տարեկան երեխաների ուսումնական ծրագրերը բարելավելու համար,

• բարելավել ծնողավարության հմտությունները և վարքը. օգնել ծնողներին իրատեսական ակնակալիքներ ունենալու մինչև 6 տարեկան երեխաներից, ինչպես նաև երեխայի տարիքին համապատասխան տարբեր խաղեր կազմակերպելու նրանց համար,

• բարելավել մանկավարժների մասնագիտական պատրաստվածությունը. ուղենիշ լինել ուսուցիչների վերապատրաստման ծրագրերի մշակման համար,

• գնահատել նախադպրոցական ծրագրերի արդյունավետությունը. հիմք հանդիսանալ ընտրելու կամ մշակելու համար երեխաների առաջընթացի գնահատման միջոցներ՝ որպես ծրագրի արդյունավետության ամբողջական գնահատման մաս,

• բարձրացնել հանրության գիտակցությունը վաղ մանկության շրջանի կարևորության վերաբերյալ. օգնել հասարակությանը ավելի լավ հասկանալ և արժևորել վաղ մանկության տարիքը, ինչպես նաև իրենց ավանդն ունենալ մինչև 6 տարեկան երեխաներին որակյալ ծառայություններով ապահովելու հարցում:

Վաղ մանկության զարգացման խնդիրներով զբաղվող մասնագետները կարող են այս չափորոշիչներն օգտագործել տարբեր նպատակներով.

• սահմանելու զարգացման նպատակները, որոնց երեխաները պետք է հասնեն ծննդից մինչև 6 տարեկան հասակը,

• բարելավելու ուսումնական միջավայրը,

• ապահովելու ուսումնառության շարունակական գործընթացը:

Չափորոշիչները դաստիարակների/մանկավարժների համար ստեղծում են այն հիմքը, որի վրա նրանք կարող են պլանավորել ուսուցումը: Սույն փաստաթուղթը, իհարկե, ուսումնական ծրագիր չէ, սակայն այն ներկայացնում է այն ոլորտները, որոնց վրա մանկավարժները պետք է հիմնվեն երեխաների ուսուցումը պլանավորելիս: Մասնագետները պետք է հիշեն, որ դրանք նախատեսված են նախադպրոցական տարիքի երեխաների համար իրատեսական պլանավորման, խաղային ուսումնադաստիարակչական գործունեության հարստացման և յուրաքանչյուր

երեխայի աճի խթանման ու լիակատար ներուժի վերհանման խնդիրների իրականացման համար: Չափորոշիչները կարող են լինել նաև գործիք/ միջոց այն ծնողների համար, որոնք հաճախ անհանգստանում են, թե արդյոք իրենց երեխաները «ճի՞շտ» գիտելիքներ և հմտություններ են ստանում՝ հետագայում դպրոց գնալու համար: Չափորոշիչների օգնությամբ ծնողները կտեսնեն, որ առօրյա գործողությունների միջոցով երեխաներին կարելի է սովորեցնել այն, ինչ նրանց պետք է իմանալ հետագայում դպրոցում հաջողության հասնելու համար: Միևնույն ժամանակ կարևոր է ընդգծել, որ չափորոշիչները նախատեսված չեն

- որոշելու համար, թե արդյոք երեխան «պատրա՞ստ է մանկապարտեզ կամ դպրոց գնալու, թե՝ ոչ,
- օգտագործվելու որպես գործիք՝ երեխաների ախտորոշման կամ պիտակավորման նպատակով,
- պատճառ հանդիսանալու, որ երեխաները զրկվեն նոր ծրագրերի կամ փորձառությունների մասնակցելուց,
- մի երեխային մյուսի հետ համեմատելու համար,
- երեխայի զարգացման մակարդակը գնահատելու համար,
- որպես ուսումնական ծրագիր օգտագործելու համար (թեև ուսուցիչները կարող են այս նյութերն օգտագործել ուսումնական պարապմունքներ պլանավորելու համար):

ԳԼՈՒԽ 1.1 0-6 տարեկան երեխայի կրթության և զարգացման կազմակերպման մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրման կարգը

0-6 տարեկան երեխայի կրթության և զարգացման կազմակերպման մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրման համար հիմք է հանդիսանում երեխայի կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիքի (այսուհետ՝ ԿԶԱՊԿ) գնահատումը (այսուհետ՝ Գնահատում), որն իրականացվում է մանկավարժահոգեբանական գնահատման չափանիշներին համապատասխան և նպատակ ունի սահմանելու՝

երեխայի կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանները՝ ապահովելով ծրագրային, մեթոդական և միջավայրային անհրաժեշտ հարմարեցումներ.

սահմանված կարգով և դեպքերում ֆինանսավորման բարձրացված չափաքանակ տրամադրելու հիմքերը.

մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների (այսուհետ՝ ՄՀ ծառայություն) մակարդակը, ծավալները և տևողությունը:

Գնահատումն իրականացվում է երեք մակարդակներում՝

Նախադպրոցական մակարդակի Գնահատում՝ նախադպրոցական ուսումնական հաստատության (այսուհետ՝ ՆՈՒՀ) մանկավարժական աշխատողների և մանկավարժահոգեբանական աջակցության խմբի (այսուհետ՝ ՄՀ աջակցության խումբ) կողմից (առկայության դեպքում).

Տարածքային մակարդակի Գնահատում՝ Տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի (այսուհետ՝ ՏՄԱԿ) մասնագետների կողմից.

Հանրապետական մակարդակի Գնահատում՝ բողոքարկված դեպքերի գնահատում Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնի (այսուհետ՝ ՀՄԿ) մասնագետների կողմից:

Նախադպրոցական մակարդակում

✦ ՄՀ ծառայությունները տրամադրվում են Նախադպրոցական մակարդակի գնահատման արդյունքների ամփոփումից հետո՝ Կանխարգելիչ միջամտությունների պլանով, որը մշակվում և իրականացվում է ՆՈՒՀ-ի մանկավարժների կողմից մեկ կիսամյակի համար.

✦ մանկավարժահոգեբանական աջակցության կարիք ունեցող յուրաքանչյուր երեխային տրամադրվող ՄՀ ծառայությունների ժամանակահատվածը, տևողությունը, ծավալը, ծառայության տեսակը և տրամադրման գրաֆիկը մշակվում է Նախադպրոցական մակարդակի գնահատման արդյունքների հիման վրա՝ ՆՈՒՀ-ի և ՏՄԱԿ-ի ՄՀ աջակցության խմբի կողմից և հաստատվում է ՆՈՒՀ-ի տնօրենի կողմից.

✦ մանկավարժները և ՄՀ աջակցության խումբը համագործակցելով երեխայի ծնողների հետ՝ իրականացնում են Կանխարգելիչ միջամտությունների պլանով նախատեսված գործողությունները՝ աջակցելով երեխային, նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչներով սահմանված կրթական ծրագրերի բովանդակությունը հասակակիցների հետ զուգընթաց յուրացնելու գործընթացում:

Տարածքային մակարդակում ծառայությունները տրամադրվում են ՏՄԱԿ-ի կողմից այն երեխաներին, ովքեր տվյալ մակարդակում սահմանված կարգով գնահատվել և ճանաչվել են որպես ԿԶԱՊԿ ունեցող: ՏՄԱԿ-ում ՄՀ ծառայությունների տրամադրումը երեխային իրականացվում է անվճար, ՏՄԱԿ-ի միջոցներով, ուսումնական պարապմունքներից հետո, ըստ նախատեսված տևողության, ծավալի և երեխայի ԱՈՒԶՊ-ում նշված ժամանակացույցի:

Հանրապետական մակարդակում ՄՀ ծառայությունները տրամադրվում են ՀՄԿ-ի կողմից ՏՄԱԿ-ներին, ՆՈՒՀ-երին, այլ գերատեսչությունների համապատասխան բաժիններին, ԿԶԱՊԿ ունեցող երեխաներին, նրանց ծնողներին: ՀՄԿ-ն ապահովում է ԿԶԱՊԿ-ի գնահատման ու ՄՀ ծառայությունների տրամադրման միասնական մոտեցումների կիրառումը՝ համակարգելով և մշտադիտարկելով ՏՄԱԿ-ների աշխատանքը, ինչպես նաև ստեղծում է ԿԶԱՊԿ ունեցող երեխաների կրթության կազմակերպման արդյունավետության բարձրացմանը միտված մեթոդական գրականություն, դիդակտիկ նյութեր և ուսումնական նյութերի հարմարեցումներ:

ՄՀ ծառայություն ստացող յուրաքանչյուր երեխայի համար կազմվում է անհատական գործի թղթապանակ, որը ներառում է երեխայի Նախադպրոցական և/կամ Տարածքային մակարդակների Գնահատման արդյունքների արձանագրությունները, եզրակացությունները, ԿԶԱՊԿ-ի վերաբերյալ վկայագիրը, ԱՈՒԶՊ-ն, երեխային տրամադրվող ՄՀ ծառայությունների ժամանակացույցը, երեխայի զարգացման վերաբերյալ հավաքագրած և արձանագրած ցանկացած տեղեկատվություն և դրա հետ կապված այլ նյութեր (լուսանկար, տեսանյութեր, երեխայի աշխատանքներ և այլն):

ԳԼՈՒԽ 1.2 Դաստիարակի դերը նախադպրոցական տարիքի երեխայի կրթության և զարգացման կարիքի գնահատման գործընթացում

2001թ.ից Հայաստանում իրականացվում է համընդհանուր ներառական կրթություն: Այս տարիների ընթացքում տարբեր կերպ է ընկալվել և մատուցվել այս ծրագիրը: Սակայն վերջին տարիներին այն ավելի ընդգրկուն դրսևորումներ ձեռք բերեց, քանի որ արդեն ի հայտ եկան հայերեն, հանրամատչելի գրականություն, որը մանկավարժին հնարավորություն է տալիս ավելի հեշտ, ճիշտ և արդյունավետ

իրականացնել ԿԶԱՊԿՈՒ երեխաների առանձնահատուկ պայմանների կարիքը և կազմել, իրականացնել տվյալ երեխայի հոգեբանական առանձնահատկությունները հաշվի առնելով:

Սովորաբար ՆՈՒՀ-ում դաստիարակի աշխատանքը սկսվում է դիտարկումից, մենք կատարում ենք դիտարկումներ, քննարկում աջակցող մասնագետների հետ և դրանց հիման վրա դուրս ենք բերում երեխայի առաջնային կարիքները, դրանց հաղթահարման ուղիները:

Դիտարկումից հետո աջակցող թիմի հետ, ծնողի համաձայնությամբ կատարում ենք առաջնային մակարդակի գնահատում: Այն իրենից ներկայացնում է հարցաշար, որի օգնությամբ մենք տեղեկություն ենք ստանում երեխայի իմացական, սոցիալական, անձնային, ինքնասպասարկման, սովորելու նկատմամբ վերաբերմունքի մասին: Յուրաքանչյուրն հայտնում է իր կարծիքը ամեն ոլորտի շուրջ և կատարվում է մեկ ընդհանուր եզրահանգում: Դրանից հետո արդեն կազմվում է արձանագրություն, ըստ որի որոշվում է երեխայի առանձնահատուկ պայմանի կարիքի աստիճանը և աջակցության ժամանակահատվածը: Եթե պարզվում է, որ երեխան ունի թեթև աստիճանի աջակցության կարիք, ապա այն տրամադրվում է ՆՈՒՀ-ի կողմից: Իսկ եթե երեխան ունենում է միջին, ծանր, խորը աջակցության կարիք, այդ դեպքում կատարվում է երկրորդային մակարդակի գնահատում, որը կատարվում է ՏՄԱԿ-ի մասնագետների հետ համատեղ՝ ծնողի համաձայնությամբ և ներկայությամբ:

Վերջնական գնահատումն ունենալուց հետո կազմվում է երեխայի անհատական զարգացման և ուսուցման պլանը: Այդտեղ համառոտ կերպով գրվում է յուրաքանչյուր մասնագետի նպատակը, ենթանպատակները, դրանց կատարման քայլերի հաջորդականությունը, ակնկալվող արդյունքի մոտավոր ժամկետը: Դաստիարակի նպատակները պետք է բխեն ԿԶԱՊԿՈՒ երեխայի ակտուալ մակարդակից և տանեն դեպի մոտակա մակարդակը: Օրինակ՝ եթե երեխան կարողանում է հաշվել մինչև հինգը, ապա կարելի է երկրաչափական պատկերների, այլ առարկաների միջոցով սովորել հաշվել մինչև տասը: Կամ, եթե երեխան կարողանում է կտրել պատկերները, ապա կերպարվեստի պարապմունքներին սովորել ամրացնել դրանք թղթին կամ այլ մակերեսի վրա: Կարևոր է նաև երեխաների ֆիզիկական դաստիարակության պարապմունքներին ներգրավվածությունը, եթե, իհարկե, երեխան չունի կամ, եթե կա, թեթև աստիճանի շարժողական անկարողություն:

Երաժշտական դաստիարակության ժամանակ կարևոր է, որ դաստիարակը երաժշտության դաստիարակի հետ միասին, ներգրավեն երեխային պարապմունքի ողջ պրոցեսի մեջ։ Օրինակ՝ երգեն նրա հետ միասին, խրախուսեն երգչային ամենապարզ փորձերն անգամ, օգնեն կատարել պարային շարժումներ, պտտվել, ծափել, նստել ծնկների վրա պարելիս։

Այս ամենի հետ մեկտեղ շատ կարևոր է, որ դաստիարակը երեխային ընդունի այնպիսին, ինչպիսին որ նա կա։ Սա այն կարևոր օղակն է, որը մեզ օգնելու է հասնել մեր դրած նպատակներին։

Կարևոր է նաև ծնողի հետ համագործակցությունը, քանի որ երեխայի զարգացման առաջին օղակը ընտանիքն է և այն պետք է միշտ լինի համապատասխան միջավայրին հարմարեցումներով։ Ծնողը պետք է շարունակի ՆՈՒՀ-ում տրամադրված ծառայությունների ժամանակ ցուցադրված աշխատանքերը։ ՆՈՒՀ-ում ծնող-համայնք համագործակցությունը լավագույնն է ցանկացած նպատակին հասնելու համար։

ԳԼՈՒԽ 2 Կերպարվեստի տեսակների, ժանրերի, ուսուցումը մանկապարտեզում: Կերպարվեստի պարապմունքի տեսակները

Նախադպրոցական կրթական հաստատություններում երեխայի կերպարվեստային գործունեության տեսակներն են՝ ներառական, բնօրինակից, թեմատիկ, ազատ ստեղծագործական բնույթի, հիշողությամբ, զրույց արվեստի թեմաներով պարապմունքները, որոնց ընթացքում երեխաները ստանում են ինչպես տեսական գիտելիքներ գեղարվեստական գործունեության վերաբերյալ, այնպես էլ ձեռք են բերում նկարելու, ծեփակերտելու, դեկորատիվ աշխատանքներ կատարելու,

ինքնուրույն ստեղծագործական հորինվածքներ ստեղծելու համար անհրաժեշտ կարողություններ ու հմտություններ:

▪ **Գեղանկարչություն կամ գունանկարչություն (երփնագիր)-** Կերպարվեստի տեսակ: Գեղանկարչությունը մարդկային աշխատանքի զարգացած ձևերից մեկն է և առարկայական, գեղագիտական արժեքների ստեղծման ոլորտ: Ինչպես և արվեստի մյուս տեսակները, գեղանկարչությունը ճանաչողական և գաղափարական խնդիր է իրագործում, ստեղծում մարդու, բնության, առարկաների, պատմական և հասարակական երևույթների գեղրարվեստական պատկերները:Գեղանկարչության բազմաթիվ ստեղծագործություններ ունեն փաստահինֆորմացիոն արժեք:

▪ **Գծանկար կամ գրաֆիկա-** Գծանկարը գրաֆիկայի տեսակ է, նաև հիմք է նկարչական արվեստի բոլոր տեսակների համար: Գծանկարը կարող է հանդես գալ ինչպես վերջնական ստեղծագործություն, այնպես էլ տեխնիկական բազա հանդիսանալ գեղրարվեստական ստեղծագործությունների համար: Այդ իսկ պատճառով գծանկարը, խորապես ուսումնասիրվում է նկարիչների, քանդակագործների և ճարտարապետների կողմից:

Սովորաբար «գծանկար» տերմինը նշանակում է գրաֆիկական միջոցներով (ուրվա-գիծ, գիծ, բիծ) հարթության վրա պատկերված ստեղծագործություն: Գծանկարը որպես ինքնուրույն ստեղծագործություն դիտվում է եվրոպական արվեստում, որպես գրաֆիկայից առանձին տեսակ:

▪ **Քանդակագործություն-** Քանդակագործությունը պլաստիկ արվեստներից մեկն է, կերպարվեստի տեսակ, որ պատկերումները կատարում

է ծավալային եռաչափ մարմնավորումներով: Որպես կանոն քանդակագործությունը պատկերում է մարդուն, սակավ՝ կենդանիներին (անիմալիստական ժանր), ավելի սակավ՝ բնությունը (բնապատկեր), և առարկաներ (նատյուրմորտ): Գեղանկարչության ու գրաֆիկայի համեմատ ունենալով գեղրարվեստաարտահայտչական ավելի սահմանափակ միջոցներ՝ քանդակագործությունը միևնույն ժամանակ ստեղծում է ծավալների շոփելի ու իրականակերպ դրսևորումներ և դիտողին հնարավորություն է տալիս պատկերվածն ընկալելու տարբեր դիտակետերից:

▪ **Դեկորատիվ կիրառական արվեստ-** Դեկորատիվ արվեստի ճյուղը ընդգրկում է ստեղծագործական այն բնագավառները, որում ստեղծվում են գեղրարվեստական

կենցաղա-յին իրեր (կահույքի, գործվածքի, աշխատանքի գործիք, ինչպես նաև զգեստ, զարդ):

Դեկորատիվ արվեստն ակզբնավորվել է հասարակության զարգացման վաղ շրջանում: Դարերի ընթացքում այն կրել է տարբեր ոճերի և ուղղությունների ազդեցությունը: Մ.թ.ա. II հազարամյակում Չինաստանում ստեղծվել են բրոնզե գեղրարվեստական կեր-տվածքներ, ոսկրե և նեֆրիտե քանդակազարդ առարկաներ, մ.թ.ա. V-III դարերում՝ բարձրորակ մետաքսե գործվածքներ, խեցեղեն, մ.թ.ա. VIII-X դարերում, ծաղկման է հասել ճենապակու, իսկ XIV-XVIII դարերում ՝խեցեգործական արտադրությունը:

▪ **Կառուցողական արվեստ կամ արխիտեկտոնիկա-**(հունարեն՝ շինարվեստ, ճարտարապետություն), ճարտարապետության մեջ կառուցողական արվեստի գլխավոր սկզբունքը, շինության, նաև դեկորատիվ արվեստի ծսվսլային ստեղծագործություն կոնստրակտիվ համակարգին հատուկ կառուցվածքային օրինաչափությունների գեղրար-վեստական արտահայտությունը:

Արխիտեկտոնիկան դրսևորվում է կրող և կրվող մասերի փոխադարձ կապի և փոխդասավորվածության միջոցով:

2.1 .Նախադպրոցականին կերպարվեստ ուսուցանելու մեթոդները

Կորպարվեստի դասավանդման ընթացքում կիրառվող ակտիվ ուսուցման մեթոդներն են՝

«Մտագրոհի մեթոդ», «Բանալի եզրույթների մեթոդ »,«Խմբավորման մեթոդ», «Կարուսելի մեթոդ» , «Վեննի դիագրամի մեթոդ», «Բանավոր շրջանագծի մեթոդ»:

ՄՏԱԳՐՈՀԻ ՄԵԹՈԴ- Նախքան պարապմունքը սկսելը երեխաներին առաջարկվում է քննարկել այն,ինչ գիտեն տվյալ թեմայի վերաբերյալ,ապա դաստիարակը հերթականությամբ հարցնում է բոլոր երեխաներին,և նրանք պետք է ասեն այն ամենը,ինչ մտածում են:Այդ մեթոդի շնորհիվ երեխանրը ներկայացնում են իրենց գիտելիքները,հայտնում են կարծիքներ՝ լինի դա ճիշտ թե սխալ:

ԲԱՆԱԼԻ ԵԶՐՈՒՅԹՆԵՐԻ ՄԵԹՈԴ- Պարապմունքը սկսելուց առաջ դաստիարակը ասում է տվյալ թեմային մոտ չորս բառեր և երեխաները ըստ այդ բառերի պետք է գուշակեն,թե ինչի մասին է իրենց պատմելու մանկավարժը: Օրինակ **Գարնան**

մասինպարապմունքը սկսելուց առաջ դաստիարակը ասում է ,«Տարվա որ եղանակի հետ կապ ունեն-Ձնծաղիկը ,մայրիկների տոնը, հաճելի եղանակը, բողբոջած ծառերը բառերը և բառակապակցությունները: »

ԽՄԲԱՎՈՐՄԱՆ ՄԵԹՈԴ- Խմբավորման մեթոդը նպատակահարմար է կիրառել երեխաների որոշ խմբի մեկ ընդհանուր գործի շուրջ համախմբելու համար:Այդ կերպ երեխաները ցուցաբերում են փոխօգնություն,մեկը մյուսին աջակցելու ցանկություն, հարգանք ընկերոջ գործի նկատմամբ,ձևավորվում է ուրիշի կարծիքը հաշվի առնելու գիտակցումը:Երեխաներին կարելի է խմբավորել հենց տվյալ պարապմունքի համար անհրաժեշտ դիդակտիկ պարագաներով,օրինակ «մրգերի» մասին պարապմունք վարելիս երեխաներին բաժանում են 4 խնձոր, 4 տանձ ,4 նարինջ ,4 արքայախնձոր և այլն,և այդ կերպ խմբավորում սեղանի շուրջ:

ԿԱՐՈՒՍԵԼԻ ՄԵԹՈԴ -Կարուսելի մեթոդը կրկին ենթադրում է երեխաների համատեղ աշխատանք ,որի ընթացքում երեխաները համախմբվում են մեկ աշխատանք իրականացնելու համար:Նախապես խմբերի բաժանված երեխաների առաջին խումբը 5 րոպեում կատարում է առաջադրանքը ,որի վրա աշխատանքը շարունակում է մյուս խումբը կրկին 5 րոպե և այդպես շարունակ: Օրինակ ,հանձնարարված է նկարել գարուն. առաջին խումբը նկարում է ծառերը, մյուս խումբ՝ խոտերը , երրորդը ՝ արև, վերջինն էլ ամպեր:

ՎԵՆՆԻ ԴԻԳՐԱՄԻ ՄԵԹՈԴ- Վեննի դիագրամը կազմվում է երկու շրջանագծով ,որոնք հատման որոշակի մակերես ունեն : Այդ շրջանագծերը օգտագործվում են երկու կերպարներ միմիանց հակադրելու, իսկ հատման մասը ՝ դրանց ընդհանրությունները ընդգծելու համար :Օրինակ, շրջանագծի մի մասում երեխաները նկարում են գարուն մյուսում՝ աշուն ,իսկ դրանց հատման կետում՝ ընդհանրությունները:

ԲԱՆԱՎՈՐ ՇՐՋԱՆԱԳԾԻ ՄԵԹՈԴ- Բանավոր շրջանագծի մեթոդը համագործակցային վարժություն է: Երեխաները իրենց հանձնարարված թեմայի վերաբերյալ հերթականությամբ մտքեր են արտահայտում և աշխատում են անել այնպես որ մեկը մյուսին տրամաբանորեն շարունակի,որտեղ նրանց մեծապես օգնում է դաստիարակը: Օրինակ մարտի 8-ի մասին ասում են,որ դա մայրիների,տատիկների տոնն է , դա գարնանային տոն է այդ օրը պետք է բացիկներ տալ մայրիկներին և տատիկներին, և այդպես շարունակ:

1.**կերպարվեստի պարապմունքների տեսակները մանկապարտեզում**

Մանկապարտեզում կերպարվեստի հիմնական տեսակներն են՝

Պատկերում բնօրինակից -Գծանկարից և գունանկարից տարբեր առարկաների պատկերում: Առարկաների պատկերում (ավարտված) ճեպանկար, բնօրինակից, երևակայությամբ և հիշողությամբ, եթե առարկան հնարավոր չէ զննել: Բնօրինակից, հիշողությամբ և պատկերացմամբ ծառերի, թռչունների, կենդանիների ուրվապատկերը (նկարչական նյութը՝ ջրաներկ, գուաշ, գունամատիտ, մոմակավիճներ, սպիտակ կամ երանգավոր թղթի վրա) առանց նախօրոք մատիտով արված նկարի: Բնօրինակից և հիշողությամբ կենդանիների, թռչունների և մարդու ֆիգուրայի պատկերման (ներառյալ ճեպանկարում) կարողության զարգացում: Վառ արտահայտված ռեֆլեքսներով տաք և սառը գունային գամմայով նատյուրմորտների, աշնանային և գարնանային ծաղիկների պատկերում: Աշնանային և գարնանային բնության էտյուդային պատկերում (պլեներ) կամ պատկերում հիշողությամբ: Բնօրինակից, հիշողությամբ և պատկերացմամբ կենցաղային տարբեր իրերի՝ մրգերի, բանջարեղենի, ծաղիկների պատկերում (ներառյալ ճեպանկարում): Տարբեր գույների երկու ծալքավոր կտորների ֆոնին 2–3 առարկաներից կազմված նատյուրմորտի բնօրինակից պատկերում: Նկարչություն բնության գրկում (պլեներ) բնության տեսարաններ, շինություններ, կենդանիներ:

2.Թեմատիկ պատկերում -Շրջակա միջավայր: Գրական ստեղծագործության ձևավորում կամ պատկերազարդում: Թեմատիկ նկարչությունը պետք է իրականացվի դիտման, պատկերացման, հիշողության և հեքիաթների ձևավորման միջոցով: Կոմպոզիցիա՝ հասկացության լայն ըմբռնում: Իրականության, բնության որոշ երևույթների, կենցաղային սյուժեներ

ա) «Գեղեցիկ ձմեռ», «Ամանոր», «Գարուն», «Տոնական հրավառություն», «Հեքիաթի ամրոցը», «Կիզիչ օր», «Կրկեսում», «Ինչպես կօգնեմ մայրիկիս», «Առաջին ձյունը» «Ծիածան», «Ուշ աշուն», «Կենդանաբանական այգում», «Ճանապարհորդություն օդապարիկով», «Տոնական փաթեթավորում», «Տոնածառի խաղալիքներ», «Հայրենի երկրամասի գեղեցկությունը», «Զբոսանք այգում», «Մայրամուտ», «Թավուտ անտառում», «Բերքահավաք», «Իմ ծնողների դիմանկարները», «Ձմեռային ձնակույտեր», «Հեքիաթային անտառում», «Խատուտիկները դաշտում», «Անտառի բացատ», «Երեկոյան քաղաքը», «Իմ սիրելի կենդանին», «Փողոցն իմ պատուհանից», «Իմ Հայաստան», «Ջունգլիներում», «Լեռներում», «Անապատ», «Աշնանային շուկա», «Մենք

նկարում ենք երաժշտություն», «Հրավառություն», «Բերքահավաք», «Մարզադահլիճում», «Ծառատունկ», «Բաբելոնյան աշտարակ»: «Մենք նկարում ենք տարվա եղանակներ», «Իմ սիրած խաղալիքները», «Խաղալիքները պարում են», «Գարնանը բակում», «Իմ ընտանիքը», «Իմ մայրիկը», «Կենդանաբանական այգում», «Անձրևոտ օր», «Թող միշտ լինի արևը»:

բ)Ձեռքը գրելուն նախապատրաստելու շրջանում առաջարկվող առաջադրանքների օրինակներ, «Տոնավաճառ», «Հագուստ աշնան համար», «Ժողովրդական վարպետի արհեստանոցում»,

գ) Հեքիաթների նկարազարդումներ. «Սևուկ ուլիկը», «Ծիտը», «Գայլն ու գառը», «Սուտլիկ որսկանը», «Պոչատ աղվեսը», «Շունն ու կատուն», «Հեքիաթ տաք և սառը գույների մասին»:

դ) Խմբային աշխատանքների համար նախատեսված թեմաներ (երբեմն ուսուցչի օգնությամբ) «Տոնահանդես», «Տիկնիկի սբրոց»:

3.Պատկերում հիշողությամբ -Պատկերման ընդհանրացված բնույթը: Զարգացնում է դեկորատիվ կոմպոզիցիայի հիմնական օրինաչափությունները՝ համաչափութ-
յուն, անհամափաչություն (սիմետրիա, ասիմետրիա):

- նախշերի կատարում
- կիրառական արվեստի նմուշների պատկերազարդում:
- շնորհավորական բացիկների պատրաստում և ձևավորում:
- պատի թերթերի և վահանակների պատրաստում:
- գրքի ձևավորում:

4. Պատկերում կրկնօրինակմամբ - Նախշեր և դեկորատիվ նախշերի պատկերումը օրինակների օգնությամբ: Աշխատանք ուղղանկյան, շրջանագծի մեջ՝ բուսական և երկրաչափական դեկորատիվ տարրերով: Առարկաների, բույսերի և կենդանիների ձևի ոճավորում և ընդհանրացում, ազգային զարդանկարչության առանձնահատկությունների, հագուստի, ափսեների և խաղալիքների ձևավորում: Արտահայտչական միջոցներ՝ կետ, գիծ, ֆակտուրա, տեքստուրա, գույն, ձև, ծավալ, համաչափություններ, զանգված և տարածություն: Կոմպոզիցիայի հիմունքներ(սիմետրիա, ասիմետրիա, հավասարակշռություն, ռիթմ և շարժում): Հակադրություն և ներդաշնակություն:

5. Ազատ ստեղծագործական պատկերում -Կավով կամ ծեփանյութով կատարվող աշխատանք: Կավը կամ պլաստիլինը՝ որպես գեղարվեստական նյութ, գործիքների ու հարմարանքների անվանումները, ծեփակերտման աշխատանքների զարգացման մասին (ապակի, տախտակ, ջրաման, լաթեր, դրոշմներ) տեղեկություններ: Ժողովրդական վարպետների (բրուտների,խաղալիքագործների) աշխատանքները: Ծեփակերտում՝ ժողովրդական խաղալիք: Ամանեղենի ծեփակերտման տարբեր եղանակներ: Բրուտագործական առարկաների դեկորի պարզագույն հնարներ: Ծեփակերտում /կավից կամ պլաստիլինից/ բնօրինակից, հիշողությամբ, պատկերացմամբ՝ քաղաքային տրանսպորտ, ընտանի և վայրի կենդանիներ:

Գլուխ 3 Կերպարվեստի պարապմունքների տեսակները մանկապարտեզի 1-ին և 2-րդ խմբերում

Կրտսեր առաջին խմբում անցկացվող պարապմունքի հիմնական տեսակը նկարչությունն է (2-3 տարեկան)

Կերպարվեստի պարապմունք

Խումբը՝ Կրտսեր առաջին

թեման-«Բնանկարչություն: Թեմատիկ աշխատանք՝ «Եղանակներ»:

նպատակը- Հայրենի երկրի բնաշխարհի նկատմամբ սիրո, հետաքրքրության և հոգատարության ձևավորում:

Կերպարվեստի ժանրերի, ջրաներկի ճիշտ օգտագործման, գույների և երանգների մասին պատկերացման ձևավորում:

«Տարվա եղանակները» բեմականացման ներկայացում, միջառարկայական կապի ապահովում:

Կահավորումը-Տարվա տարբեր եղանակների բնապատկերներով նկարներ, գեղեցիկ ձևավորված ամանեղեն, սպասք, կահույք, գորգեր, խաղալիքներ, գործվածքեղեն, խեցեղեն, ջրաներկ, գունավոր մատիտներ, յուղամատիտներ, գունավոր կավիճներ, նկարչական ալբոմներ, մոլբերտներ (նկարելու համար հենարան) և այլն:

Մեթոդները - Պրիզմա, Պատկերասրահ:

Պարապմունքի համառոտ ընթացք

Երեխաները ներկայացնում են նախորդ պարապմունքերին անցած

գիտելիքները կերպարվեստի ճյուղերի և ժանրերի մասին: Նշում են հիմնական և բաղադրյալ գույների մասին, առավել պատկերավոր և ուսանելի դարձնելու համար կիրառում են «Պրիզմայի» մեթոդները:

Կերպարվեստն ունի չորս հիմնական տեսակ՝ գունանկարչություն, գրաֆիկա, քանդակագործություն, դեկորատիվ-կիրառական արվեստ: Կերպարվեստի տեսակները հեշտությամբ կարելի է միմյանցից տարբերել իրենց կատարման նյութերով, գործիքներով, աշխատելաձևով:

Մանկապարտեզում փոքրերի 1-ին և 2-րդ խմբերում անցկացվող պարապմունքի հիմնական տեսակըմատիտով նկարչությունն է, ծանոթացումը մատիտանկարչությանը:

ՊԱՐԱՊՄՈՒՆՔԻ ԹԵՄԱՆ՝ <<ԲԱՐՈՒԹՅԱՆ ԾԱՂԻԿ>>

ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ ՊԱՐԱՊՄՈՒՆՔԻՆ՝

Նախապես դաստիարակը երեխաների համար պատրաստում է 7 գույնով ծաղիկ: Աշխատանքը սկսելուց առաջ նախապատրաստում է անհրաժեշտ պարագաները, դիդակտիկ նյութերը, այնուհետ երեխաները սկսում են աշխատանքը:

ԴԻԴԱԿՏԻԿ ՆՅՈՒԹԵՐ՝ նախօրոք պատրաստված 7 գույնով ծաղիկ , բարությունը բնութագրող ոտանավոր կամ հանելուկ, մուլտֆիլմ:

ԱՆՀՐԱԺԵՇՏ ՊԱՐԱԳԱՆԵՐ՝ նկարչական պարագաներ, հիգիենայի պարագաներ:

ՆՊԱՏԱԿԸ

պարապմունքի նպատակն է ՝ կերպարվեստի միջոցով զարգացնել երեխայի բարոյական որակները, գունազգացողությունը:

ԽՆԴԻՐՆԵՐԸ՝

1. Երեխաներին ծանոթացնել հեքիաթի բովանդակությանը, հեղինակին,
2. ծաղկի պատկերման եղանակներին,
3. ընդլայնել երեխաների բարոյական որակները,
4. փոխանցել գիտելիքներ գույների և դրանց երանգների վերաբերյալ:

ԿԻՐԱՌՎՈՂ ՄԵԹՈԴ ՆԵՐ՝

Դիտման, զննման, ցուցադրման, խոսքային, վերլուծության, հարց ու պատասխանի, համագործակցության մեթոդները:

ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ՄԱՍԻ ԸՆԹԱՑՔԸ

1. պարապմունքը սկսելուց առաջ դաստիարակը երեխաների հետ զրույց է

անցկացնում /3-5 րոպե/

2. Նրանց հարցնում է, թե ինչ գիտեն ծաղիկները մասին:

3. Ցույց է տալիս ծաղիկների նկարներ:

4. Տեղեկություններ է տալիս նրանց մասին՝ թե ինչպիսի ծաղիկներ են լինում:

5. Ծաղկի հատկանիշները բնութագրող հանելուկ կամ բանաստեղծություն է ընթերցում:

6. Ցույց է տալիս նախապես պատրաստված ծաղիկը:

7. Այնուհետև սկսում է բացատրել ծաղիկների նկարելու եղանակը, որ նկարելիս պետք է ամեն ինչ համաչափ և կոկիկ լինի:

ԸՆԹԱՑՔԸ

պարապմունքը սկսվում է ՛՛ Յոթնագույն ծաղիկ՛՛ հեքիաթի ընթերցանությամբ: Ընթերցելուց հետո հարց ու պատասխանի միջոցավ ծանոթացնում ենք հեքիաթի սյուժեին: Երեխաների ուշադրությունը հրավիրվում է հեքիաթի այն հատվածի վրա, երբ աղջկա ձեռքին գտնվող յոթնագույն ծաղկի թերթիկներից մեկ հատ էր մնացել: Աղջիկը բոլոր թերթիկները անիմաստ օգտագործել էր, բայց վերջին թերթիկով բարի գործ էր կատարել՝ օգնել էր հաշմանդամ մի նտղայի, որը հետագայում դարձել էր իր ամենամտերիմ ընկերը:

ԱՄՓՈՓՈՒՄ /3-5 րոպե / Նկարելուց հետո վերլուծվում է յուրաքանչյուր երեխայի նկարը և միասին գալիս են այն եզրահանգման, որ եթե բոլորը իրենց ծաղկի վերջին թերթիկով բարի գործեր անեն, ապա աշխարհում կտիրի բարություն և ոչ ոք չի տխրի: Աշխատանքը անվանվեց <<բարություն>>: Այս աշխատանքի միջոցով երեխաների մեջ առաջացրինք հոգատար վերաբերմունք հաշմանդամների և ընկերների նկատմամբ: Երեխաների մեջ առաջանում էք բարի գործ կատարելու ցանկությունը: Միաժամանակ ամրապնդվում է ՛՛7՛՛ գույների և նրբերանգների իմացությունը:

ԿԵՐՊԱՐՎԵՍՏԻ ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ԱՎԱԳ ԽՄԲՈՒՄ

Մանկապատեզի ավագ խմբում(5-6 տարեկան) անցկացվող պարապմունքի հիմնական տեսակը ապլիկացիան է :

Խումբը՝ ավագ

Թեման՝ պաղպաղակ

Տեսակը՝ ապլիկացիա

Տևողությունը՝ 25-30

Նպատակը՝ ▪շարունակել ծանոթացնել ապլիկացիոն աշխատանքին և նրա հատկություններին

▪ ամրապնդել երեխայի գիտելիքները ապլիկացիայի վերաբերյալ, օգնել նրան աշխատել գունավոր թղթերով

▪զարգացնել մանր մոտորիկան

▪առաջացնել հետաքրքրություն թղթերով աշխատանքի նկատմամբ:

Անհրաժեշտ նյութեր՝ մանկական մկրատ՝ բութ ծայրով, սոսինձ ,գունավոր թղթեր, ստվարաթուղթ:

Ընթացքը

Դաստիարակը բաժանում է երեխաներին գունավոր թղթեր , մկրատներ, սոսինձ, ստվարաթուղթ: Դաստիարակը իր օրինակով պատկերներ է ստանում ՝ ստվարաթղթից, ապա սոսնձի միջոցով հավաքում պատկեր: Երեխաները դիտելուց հետո կատարում են աշխատանքը:

Ամփոփում- Դաստիարակը ամփոփում է կատարած աշխատանքը հարցերով և ապա երեխաներին պատրաստած ապլիկացիոն պատկերները փակցնում համապատասխան անկյունում:

▪Երեխաներ այսօր մենք ի՞նչ պատրաստեցինք

▪Ձեզ դուր եկա՞վ աշխատանքի կատարման ձևը

▪Կցանկա՞նաք ձեր աշխատանքները փակցնել ապլիկացիոն անկյունում

Եզրակացություն

Երեխայի զարգացման հարցում անփոխարինելի դեր են կատարում կերպարվեստային գործունեության տարբեր ձևերը՝ նկարչությունը, ծեփակերտումը, դեկորատիվ կիրառական արվեստը, կոնստրուկտավորման աշխատանքները:

Ստեղծագործական բնույթի պարապմունքները երեխաներին զինում են գիտելիք-ներով, պատճառում են ուրախություն, արվեստի նկատմամաբ վերաբերմունք:

Կերպարվեստային պարապմունքները մանկապարտեզում կազմակերպվում են հմուտ մասնագետների կողմից: Դաստիարակը պետք է կարողանա կողմնորոշվել արվեստի, կերպարվեստի տարբեր բնագավառներում, տիրապետի նկարչական տարբեր ձևերի, կարողությունների և նկարչական տարբեր միջոցներին, տեխնիկական հնարքներին, մանկան ստեղծագործական, մանկավարժահոգեբանական գործընթացի առանձնահատկություն-ներին: Պարապմունքների հաջողությունը կված է դաստիարակի մասնագիտական բարձր որակներից, ուսուցման մեթոդների և ձևերի իմացությունից, տիրապետելու կարողությունից:

Կերպարվեստի պարապմնունքները մանկապարտեզում հիմնականում կազմակերպվում են դաստիարակի կողմից երկու եղանակով՝ **տեսական և գործնական:**

Տեսական պարապմունքի ժամանակ դաստիարակը երեխային փոխանցում է գիտելիքներ, կերպարվեստի և նրա ժանրերի, տեսակների և կառուցվածքի մասին:

Գրականության ցանկ

1. «Հայկակն սովետական հանրագիտարան » հ.2, էջ 495

2. «Մանկապարտեզի կրտսեր առաջին խմբի (2-3տարեկան) կրթական համալիր ծրագիր» Եր. 2012 թ.

3. Յուրի Տուկաչև «Մանկավարժական ձեռնարկներ», Եր. 2013 թ.

4. Լ. Ներսիսյան «Բնանկար», Եր. 2011 թ.

5. Լ. Սմբատյան, Վերդյան, Լ. Սարգսյան « Կերպարվեստի պարապմունքները 1-ին և կրտսեր 2-րդ խմբերի համար», Եր. 2015 թ.

6. Լ.Սարգսյան «Խոսքի զարգացման պարապմունքները մանկապարտեզի կրտսեր առաջին խմբում», Եր. 2019 թ.

7. Հայկական Սովետական Հանրագիտարան, Երևան, 1982, հատոր 8, էջ197-198